ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 565-Ա

«10» հունիսի 2025թ. ք. Էջմիածին

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի 82-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 10.06.2025թ. թիվ 01 արձանագրությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա են համայնքային ծառայության թափուր պաշտոններ, իսկ դրանց համալրումը անհրաժեշտ է համայնքի լիարժեք աշխատանքային գործունեության համար և այն, որ 2025 թվականի հունիսի 10-ին հայտարարված համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթները չեն կայացել հանձնաժողովների իրավազոր չլինելու պատճառով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել կրկնակի մրցույթներ, ըստ սույն որոշման հավելվածի:
2. Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող կրկնակի մրցույթների հայտարարության հրապարակումը:
3. Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չընդունել և դրանք անցկացնել՝ ընդհանուր հիմունքներով:
4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
<< 10 >> հունիսի 2025թ.
թիվ 565-Ա որոշմամբ

# ՑԱՆԿ
## Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կրկնակի անցկացվող մրցույթների

| Հ/Հ | Պաշտոն | Պաշտոնի անձնագրի ծածկագիր | Մրցույթի անցկացման ժամանակը |
|---|---|---|---|
| 1. | Աշխատակազմի քարտուղար | 1.1-1 | 20 հունիսի 10:30 |
| 2. | Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ | 2.1-3 | 20 հունիսի 12:00 |
| 3. | Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ | 3.2-4 | 20 հունիսի 14:00 |
| 4. | Իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ | 3.1-8 | 20 հունիսի 15:00 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ